ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Արևելյան Փոքր Ասիայում Անտիտավրոսյան երկրի այն մասը, որ հետագայում հայ պատմագրության մեջ հիշատակվում է Գամիրք անվան տակ, կազմում է Կապադովկիայի բարձրավանդակի մի մասը, որ գտնվում է ծովի մակերևույթից 1100 մետր բարձրության վրա և ունի ցամաքային կլիմա։

Պատմական Գամիրքը գտնվում է արևելյան երկարության 34°.49'-ից մինչև 38° 50' և հյուսիսային լայնության 38° 00'-ից մինչև 39° 54' հատման վայրում, որն իր մեջ ընդգրկում է Փոքր Ասիայի այժմյան Սվազ (Սեբաստիա) քաղաքից մինչև Կեսարիա (Արդեոս՝ «էրջիաս» լեռնաշղթանը), Հալիս գետի (Գըզըլ-Ըրմագ) ծունկից մինչև Մելաս գետի (Թոհմասու) միջև ընկած համարյա ամբողջ երկրամասը։

Անատավրոսյան երկրի մասին գրավոր տեղեկությունները[1], մինչև 19-րդ դարի 80-ական թվականները, հեռու չէին գնում նախքան մեր թվականության 6-րդ դարից։ Սակայն, 20-րդ դարի սկզբներից Մերձավոր Արևելքի մի շարք վայրերում, հատկապես Հալիս գետի ներքին հովտում կատարված հնագիտական պեղումներից հայտնաբերված մեծ թվով կտավե տախտակները՝ սեպագիր արձանագրություններով, նյութական կուլտուրայի պեղածո հարուստ իրերով, Գամիրքի պատմությունը հասցրին մինչև երրորդ հազարամյակի կեսերը (մ. թ. ա.)։

Այդ մասին առաջին գրավոր փաստերը հայտնաբերվեցին 1887 թվականին վերին Եգիպտոսի էլ-Ամառնա գյուղում[2], որոնք պատմագրության մեջ հայտնի են «էլ-Ամառնայի նամակներ» անվան տակ, երկրորդը Բողազ-Քյոյից 1906—1925 թթ.[3] (Հալիս գետի ծունկում) մոտ քսան հազար աղյուսագրեր, երրորդը Քյուլ-Թեփեում՝ 1925 թ.[4] (Փոքր Ասիայի Կեսարիա քաղաքից 16 կիլոմետր դեպի հյուսիս-արևելքի Գոմեժ գյուղի մոտ) հազար աղյուսագրեր։

Այդ հնագիտական նյութերի ուսումնասիրությունից պարզվեց, որ դրանք պարունակում են վերին աստիճանի հետաքրքիր տեղեկություններ այդ երկրամասի ցեղերի, այդ թվում Թոդարմաների ինչպես սոցիալ-քաղաքական դրության, այնպես էլ կուլտուրայի և կենցաղի մասին։ Օրինակ, էլ-Ամառնայի նամակներում ի միջի այլոց խոսվում է Սարգոն Ակկադի (2369—2314 թթ. մ. թ. ա.) դեպի Արդեոս լեռան հանքերի շրջանում Կանեշ-Բուրուշանդա քաղաքը (այժմյան Կեսարիայի մոտ—Վ. Թ.) կատարած արշավանքի մասին, ինչպես նաև Սարգոն Ակկադի երրորդ հաջորդի՝ Նարամսինի (2279 թ. մ. թ. ա.), այն արշավանքի մասին, որը կատարվել է Ակկադյան թագավորության արևմտյան սահմաններում, վերին

---

[1] Տե՛ս Հին կտակարանը, Մելիտացի Հեկատեի աշխարհագրությունը, Հերոդոտը, Ստրաբոնը, ինչպես նաև հայ մատենագիրներից Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և ուրիշներ։

[2] L. delaporte, Les Hittites, Paris, 1936, էջ 3։

[3] F. Sartiaux, Les civilisations anciennes de l'Asie-Mineure, Paris, 1928, էջ 20։

[4] B. Hrozny, Rapport préliminaire sur les fouilles tchécoslovaques de Kultépé (1925). Syrie, VIII, էջ 1—12։

Եփրատից մինչև Ամանոսի լեռներում ապրող 17 ցեղերի դեմ, որոնք համագործակցել են Նարամսինին դիմադրելու համար։ Դա հաստատվեց ինչպես Անտիտավրոսյան երկրում՝ Քյուլ-Թեփեից, հայտնաբերված երկու կավե սախտակներով, նույնպես և Աշշուրից (Ասսուր) գտնված ասուրերեն բրնագրով, որտեղ ուշադրության արժանի է Արմանի երկրի մասին հիշատակությունը[5]։

Բողազ-Քյոյից հայտնաբերված խեթական թաղավորների տարեդրերում և խեթական կոդեքսում նույնպես կան բաղմաթիվ տեղեկություններ Անտիտավրոսյան երկրի ցեղերի քաղաքական, սոցիալական պայքարի, ինչպես նաև հասարակական, տնտեսական կյանքի, հոգևոր կուլտուրայի մասին։ Վերին ասիական արժեքավոր են նաև այդ վայրերի նյութական կուլտուրայի մնացորդները, որոնք ղաակերացում են տալիս խեթերի կրած ղգեստների մասին։ Բողազ-Քյոյի մոտ «Ճաղրլը-դայայիա» (դրված ժայռ) մարդկային ֆիգուրների, վերնաղղեստների, ղլխանոցների, ոտնամանների որոշ ձևեր դեռևս պահպանվել են Գամիրքի հետագա բնակիչների մեջ։ Քյուլ-Թեփեից հայտնաբերված մի գլանակ (ցիլինդր), որ պատկերում է երկու մարդկանց կարասից եղեղով գարեջուր խմելու տեսարանը, վկայում է այն մասին, որ վաղ անցյալում Մերձավոր Արևելքում լայն տարածում ստած այդ սովորությունը, հետագայում պահպանվել է նաև հայերի մեջ, ինչպես այդ մասին խոսում է Քսենեֆոնը Անաբազիսում։ 19-րդ դարի 90-ական թվականներին Կեմերեկի մոտ, Գաբաբունարի «Ղղրլճա-ղղլա» կոչված վայրում, հավանաբար Մա աստվածուհու տաճարի մոտ, հայտնաբերված ցուլի և երինջի բնական մեծությամբ, կարմիր կավե թրծված երկու քանդակները՝ վկայում են նաև այն

Նկ. 2. Գարեջուր խմելու տեսարան, քանդակ գլանիկի վրա. Հայտնաբերված 1935 թ., Քյուլթեփեից (Գամիրք)։

մասին, որ հին ժամանակներում պատմական Հայաստանի տերիտորիայում գոյություն է ունեցել ցուլի պաշտամունք, որը հավանաբար արմենների միջոցով անցել է նաև հետագայում կազմավորված հայ ժողովրդին և կիրառվել է որպես մայր աստվածուհու՝ Անահիտի «ցլապահ դիցուհու»՝ ատրիբուտ, որի վերապրուկները մինչև 19-րդ դարի վերջերը պահպանվում էին հայկական որոշ վանքերում։ Մյուս կողմից, էլ-Ամառնայի նամակների բովանդակությունից պարզվում է, որ Անտիտավրոսյան երկրում, երկրորդ հազարամյակի երկրորդ կեսերին, առհմացեղային միավորների միջև դեռևս ամուր միություններ չէին կազմվել։ Այդ երևում է թեկուզ և այն փաստից, որ Սարգոն Ակկադը դեպի Բուրուշանդա (Փոքր Ասիա, Կեսարիայի շրջան) կատարած արշավների ընթացքում ոչ մի դիմադրության չի հան-

[5] L. delaporte, Les Hittites, Paris, 1936, էջ 38—12։

[6] Այդ երկու քանդակները, ուսուցիչ Միհրան Տոնապետյանի վկայությամբ, 1890-ական թվականներին հայտնաբերել է Կեմերեկի բնակիչ Ավիս Անդասյանը, որը որպես կիսրար աշխատելիս է եղել Ղարարունարում Բերմեղյանի աղարակում. երկու հոդարլուրների (արհեստական) միջև իր հողամասը հերկելիս հայտնաբերված կարմիր կավե վերոհիշյալ երկու քանդակները. անդգուշությամբ ջարդել է։ Քանդակների գլուխները Համբար աղա էհմալյանը գտնելել էր իր նորաշեն բնակարանի ճակատին, որպես «բարեբաստության»։

[7] Հ. Տաշյան. Պոնտական ուսումնասիրություններ, Վիեննա, 1919, էջ 357։

դիպում։ Մինչդեռ մեկ հարյուրամյակ հետո՝ սարամսինի արշավանքի ժամանակ, Անտիտավրոսյան երկրի տոհմացեղերի կյանքում արդեն որոշակի փոփոխություններ էին տեղի ունեցել։ Սահմանակից տոհմերի սեփականատեր դարձած ավազները անհրաժեշտություն են դրում արտաքին ռազմական վտանգի առաջ ժամանակավորապես համագործակցել։

Քյուլ-Թեփեում (Կեսարիայի մոտ) սեմական-առևտրական գաղութի արխիվային նյութերի ուսումնասիրությունը մեզ հետաքրքիր տեղեկություններ է տալիս Կանեշում, Բուրուշանդայում հիմնված ասորեստանյան գաղութների առևտրական գործառնությունների մասին։ Գաղութների վարչական կենտրոնը գտնվել է Ասորեստանի Աշշուր քաղաքում, իսկ Անտիտավրոսյան երկրում նրանց գործակալությունները զբաղվում էին զլխավորապես վաշխառությամբ և ապրանքափոխանակությամբ։ Այդ առևտրական գաղութներում, բացի ակկադյան պետական հիմնարկներից՝ կարումներից, կային նաև թանկարումներ (մեծ դրամատներ), որոնք տոկոսով ձույլ արծաթ և ոսկի էին մատակարարում ոչ միայն սեմական շրջիկ առևտրականներին, այլև ակկադյան պետական առևտրական հիմնարկներին[8]։ Մինչդեռ բնիկները III հազարամյակի վերջերին, ինչպես գրում է այդ մասին պրոֆ. Վ. Ի. Ավդիևը, գտնվում էին մի այնպիսի պայմաններում, որ թեև ստրուկների թիվը գնալով բազմանում էր և գրությունը վատթարանում, սակայն ստրուկների դժգոհությունները մի որոշ ժամանակ դեռևս մեծ վտանգ չէին ներկայացնում, զոնե մինչև այն ժամանակ, քանի դեռ սեմական գաղութները շահաբեր էին տոհմացեղերի ավազների համար։ Բայց երկրորդ հազարամյակի սկզբներին, երբ Միջերկրականի արևելյան ափերին Փյունիկյան քաղաք-պետությունները ծովային առևտրական նոր ճանապարհներ են բաց անում և Անտիտավրոսյան երկրում բրոնզը լայն օգտագործման մեջ է դրվում, սեմական գաղութները սկսում են իրենց դիրքը, հետևաբար, և շահավետությունը կորցնել։ Այն ատելությունը, որ բնիկները տածում էին նրանց հանդեպ, արդեն վեր է ածվում բացահայտ ապստամբության, որի հետևան-

Նկ. 3. Երնջի գլուխ (խեցեղեն)։ Հայտնաբերված է 1890 թ., Ղզլճաղշլա կոչված վայրում, Կեմերեկի մոտ։

յով այդ գաղութների սեմական բնակչության մի մասը բնաջնջվում է, մի մասը կարողանում է հեռանալ երկրից, իսկ մնացածները ձուլվում են բնիկների հետ[9]։

Մերձավոր Արևելքում ստեղծված այդպիսի պայմաններում ընդհանրապես, և մասնավորապես Հալիս գետի օղակում առտաղրական ուժերի զարգացման հետևանքով առաջանում են նոր պահանջմունքներ և շահեր։ Նախկին տոհմային հասարակարգի կառուցվածքը այլևս չէր համապատասխանում ստեղծված նոր պայմաններին, և երկրորդ հազարամյակի սկզբներին Հալիս գետի ծունկում կազմակերպվում է ռազմացեղային մի նոր միություն՝ խեթական ըստրրկապետությունը։

Խեթական պետությունը դեռ առաջին տարիներին նվաճում է Հալիս գետի ծունկից դուրս դեպի արևելք՝ մինչև Վերին Եփրատի սահմանները և դեպի հարավ՝ Սարոսի հով-

[8] Dr. G. Contenau, Civilisation des Hittites et Mitaniens, Paris, 1934, էջ 15—60։

[9] Պրոֆ. Վ. Ի. Ավդիև, Հին Արևելքի պատմություն, Երևան, 1947, էջ 125, Հմմտ. նաև Վ. Ստրուվե, Հին Արևելք, Երևան, 1938, 405 և հաջորդ էջերը։

տում գտնվող երկրները, Զումանդի (այժմ Զամանդի, հայկական Ծամնդավը), Հուպուշնա, Թեգարամա (Թոգ-արմա), Ատարիմա, Խուրսանասա (հավանաբար Խորսանա) և այլն։ Նվաճված ցեղերի ու տոհմերի ոչ միայն ռազմիկներն էին ստրկացվում, այլև բոլոր անդամները՝ ավագանու հետ միասին։ Խեթական պետության այդ բռնապետական ձևը դեռևս պահպանվում է առաջին թագավորության ամբողջ ընթացքում։ Իսկ երկրորդ թագավորությունը (վերակազմված մեր թվականությունից առաջ 15-րդ դարի կեսերին), պատմական տվյալների համաձայն, հանդիսանում է նվազ բռնապետական, քան առաջինը, այն իմաստով, որ նվաճված ցեղերի թագավորներն ու ավագանին վայելում էին որոշակի իրավունքներ։ Օրինակ՝ յուրաքանչյուր ցեղապետ կամ թագավոր դաշնագրերի ստորագրության ժամանակ իր աստծու առաջ երդվում էր իր լեզվով[10]։ Ուստի, խեթական պետության մաս կազմող ցեղերը, այդ թվում և թեգարամաները (թոգ-արմաները, թորդոմաները) թեև թագավորական մեկ դայիսոնի տակ էին հավաքված, սակայն դեռևս պահպանում էին իրենց ինքնուրույնությունը՝ որոշակի իրավունքներով։

Ինչ վերաբերում է ցեղերի ինքնությունը որոշելու հարցին, ապա Քյուլ-Թեփեում (Կեսարիայի շրջան) հայտնաբերված, այդ տեսակետից շատ արժեքավոր, մի քանի կավե տախտակներում հիշատակվում է Սարգոն Ակկադի (24-րդ դարում նախքան մեր թվականությունը) դեպի Կանեշ, Բուրուշանդա կատարած արշավանքի մասին[11], իմիջի այլոց, խոսվում է նաև Ասորեստան փոխադրված մի քանի պտղատու և դեկորատիվ ծառերի անունների մասին։ Այդ անունները, անկասկած, հնչյունային աննշան փոփոխությամբ, մինչև մեր օրերը պահպանվել են հայերենում։ Այդ կավե տախտակների 25-րդ և 29-րդ տողերում հիշատակված ծառերից են։

«Titu» (թիթու-թութ), Salluru (սալորու-սալոր), Sirdu (ցիրդու), Hashuru (հասհուրու, հասհուր-խնձոր)։

[10] L delaporte, Les Hittites, Paris, 1936, էջ 253,

[11] Weidner, Boghazkoi—studien, 6 Heft. 1922.

Խեթական պետության մեջ ընդգրկված ցեղերի, այդ թվում թեգարամաների ազգաբանության ու մղած պայքարի մասին հետաքրքիր տեղեկություններ կան հատկապես խեթական չորս թագավորների՝ Շուպպիլուլյումայի (1380—1346 թթ. մ. թ. ա.), Մուրշիլ 2-րդի (1345—1325 թթ.), Մուվատալիի (1325—1303 թթ.) և, վերջապես, Արնավանտա 2-րդի (մոտ 1200 թ. մ. թ. ա.) տարեգրություններում[12]։ Այդ տարեգրերում հիշատակվում է Անտիտավրոսյան երկրի ցեղախմբերի, ինչպես և թեգարամաների մասին, որոնք անցնում էին Եփրատի արևելյան կողմը՝ Հայասա-Ազզիի երկիրը (Աղձնիք), և բնիկների հետ միացյալ ճակատ կազմած, կռվում խեթական պետության դեմ։ Մեզ հասել է նաև մի դաշնագրի պատճենը, կնքված խեթական մեծ թագավոր Շուպպիլուլյումայի և Հայասայի առաջնորդ Հուկանայի միջև, որտեղ հայասների ընտանեկան հարաբերությունների մասին կան մի քանի շահեկան տեղեկություններ։

Այսպես, ուրեմն, Անտիտավրոսյան երկրում և նրա սահմանակից վայրերում պեղումներից հայտնաբերված գրավոր աղբյուրները, նյութական կուլտուրայի մնացուկները մեծ արժեք են ներկայացնում հայ ժողովրդի կազմավորման մեջ մեծ դեր խաղացած՝ հայասաների և, հատկապես, թոգարմաների (թեգարամաների) պատմության, նրանց կենցաղային սովորությունների ուսումնասիրության տեսակետից[13]։

## Ա. ԳԱՄԻՐՔԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վաղ միջնադարյան հայ պատմագրության մեջ Գամիրք տեղանվան տակ ճանաչվում էր Կապադովկիան, որ ընկած է Կիլիկիայի և Պոնտոսի միջև։ Գերմանացի դիտնական Ցիմմերնի կարծիքով, եգիպտական արձանագրությունների մեջ, Ռամզեսի ժամանակաշրջանում, Կապադովկիան հիշված է խեթերի «որպես առաջին դաշնակից

[12] L. delaporte, Les Hittites, Paris, 1936, էջ 78, 109, 165,

[13] Տե՛ս Վ. Ս. Թեմուրյան, Հայ ժողովրդի ծագման նախաշրջանի պատմությունից, «Տեղեկագիր», 1959, № 4,

կամ հարկատու Կաղա-վադն», եգիպտական նոր հնչյունականությամբ Կագավադն անվամբ. գա նույնն է հույների Կապադովկիայի և պարսիկների «Կատպատուկ»-ի հետ։

Ինչպես հայտնի է, ըստ կղերական պատմագրության, յուրաքանչյուր տոհմ կամ ցեղ ներկայացվում, այսինքն՝ սիմվոլացվում էր մեկ անձնավորության մեջ, իսկ տեղանունները նույնպես կապվում էին տվյալ վայրերում բնակվող ժողովուրդների անունների հետ, որոնք դարերի ընթացքում պահպանվել են իրենց մոտավոր հնչյունական կոմպլեքսով։ Օրինակ, Գամիր, Գամիրը, Գամիրքան, Թեգարամա[2], Թողարմա, Թորգոմա[3] և այլն։

Մինչ սեղագիր արձանագրությունների վերծանումը, Հին Կտակարանի Ծննդոց գրքի 10-րդ գլխում հիշատակված ժողովուրդների նախահայրերի անունները առաջին անգամ մեկնաբանում է հույն պատմիչ Հիպպոլիտը (մոտ 234 թ.)։ Նա Գոմերին կամ Գամիրին ընդունում է որպես կիմմերների, իսկ Թորգոմը՝ հայերի նախահայր. «Գոմեր և ի նմանէ Գամիրք... Թորգոմ և ի նմանէ Հայք»[4]։ Վերոհիշյալ տեղանունները այս վերջին երկու ցեղերի անուններից առաջացած լինելու հանգամանքը չի կարելի նկատի չառնել, քանի որ համեմատական տեղանունները իրենց ժամանակին բոլորը գտնվել են Մերձավոր Արևելքի միևնույն աշխարհագրական և պատմական միջավայրում։

Համաձայն ասորեստանյան արձանագրությունների, այժմ ապացուցված է, որ կիմմերների մի մասը Կերչյան Բոսֆորից նախ՝ ներխուժել է Ուրմիո լճի արևմտյան շրջանները, և ապա առաջացել է Ուրարտուի սահմանները։ Սկյութացիների կողմից նեղվելով, կիմմերները Սև ծովի հյուսիսից մըտանում են նախ Անդրկովկաս և ապա դեպի հարավ ուղղվելով, հասնում մինչև Ուրմիո լճի արևմտյան սահմանները։ Այդ մասին Հերոդոտը գրում է հետևյալը. «Նրանք (սկյութները) դուրս վտարելով Եվրոպայից կիմմերներին և հալածելով նրանց, որ փախչում էին, ներխուժեցին Ասիա և եկան, այսպիսով, մեղական երկիրը»։ Կիմմերները, հավանաբար, սկյութների այդ շրջաններում երևալու հետևանքով է, որ 714—713 թթ. (մ. թ. ա.) գարնանն առաջանում են դեպի Ուրարտուի սահմանները և երկու ուժերի հանդիպումը տեղի է ունենում Ուեսիում (Պաշ-Գալեի մոտերը)։ Ուրարտացիները պարտվում են։ Կիմմերները ներխուժում են Ուրարտուի երկիրը, սակայն, հյուսիս-արևմուտքում ուրարտական ցեղախումբերի դիմադրությանը հանդիպելով, ուղղվում են դեպի Սինոպ թերակղզու սահմանները՝ և այնտեղ ժամանակավորապես բնակություն հաստատում։ Կիմմերները 7-րդ դարի առաջին տասնամյակում Սինոպից դեպի հարավ ուղղվելով, թափանցում են Կապադովկիա։ Սակայն այստեղ տեղին է նշել, որ սովետական հայ պատմագրության մեջ ինչպես կիմմերների Փոքր Ասիա ներթափանցելու, նույնպես և նրանց բնակություն հաստատած վայրերի տեղադրության շուրջը ստեղծվել է տարակարծություն։ Ակադ. Գ. Ղափանցյանը իր «Ուրարտու» աշխատության մեջ գրում է. «Կիմմերների դեմ կատարած հարձակողական կռիվները (718 թ. մ. թ. ա.) Գամիրք-Կապադովկիայում (ընդգծումը մերն է—Վ. Թ.) ուրարտացիներին ոչ միայն հաջողություն չբերին, այլև Ռուսայի պարտվելու հետևանքով երկրի ներսում ծագեցին մի շարք ապստամբություններ և խմորումներ...»[7]։ Մինչդեռ համաձայն Աշուրբանիպալի, № № 198, 330, 444, 492, 1079 նամակների բովանդակության[8], կիմմերների և ուրարտացիների միջև առաջին ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե 718 թվականին, այլ 713 թ. ապրիլ-հունիս

---

[1] Ցիմմերեր, Գամիրը, «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1900, էջ 28։

[2] L. de la Porte, Les Hittites. Paris, 1936, էջ 97։

[3] A. H. Sayce, The Higher criticien and the verdict of the monuments, էջ 153. Flauvius Josephe (38—96 ap. J.C.). Antiquites Judaiques, I, էջ 123—126։ (REA).

[4] Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 359։

[5] Геродот, Книга I, гл. 103—104, русский перевод Мищенко, Москва, 1888.

[6] Геродот, Книга IV, гл. 12.

[7] Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 201—202։

[8] L. Waterman, Royal correspondance of the Assyrian Empire, 1930, Norwood. Mass U.S.A. Part I, II.

ամիսներին, ոչ թե Կապադովկիայում, այլ Ուրարտուի սահմանամերձ Ուեսիում (այժմյան Պաշ-Գալեի մոտերը)։ Հետևաբար. պատերազմը տեղի է ունեցել ոչ թե Ուրարտուի արևմտյան, այլ արևելյան սահմաններում։ Այդ մասին Սանխերիբը Աշուրիսուայից և Նաբուլից՝ Խալսուի կառավարից ստացած տեղեկությունների հիման վրա իր հորը՝ Սարգոն II-ին ուղարկած նամակում (№ 197) գրում է հետևյալը. «Ես ուրարտացու (Ռուսա) մասին սահմանամերձ բերդերի կայազորներից տեղեկություններ էի խնդրել։ Նաբուլին ինձ հաղորդեց հետևյալը. երբ նա (Ռուսան) ուղևորվեց Գամիր երկիրը (Մատու Գամիր), իր բանակը պարտություն կրեց. նրա երեք մեծերը իրենց զորամասերով սպանվեցին, իսկ ինքը (Ռուսան) փախավ և մտավ իր սեփական հողը»[9]։

Այս պայմաններում պարզ է, որ Մատու Գամիր-ը չի կարելի շփոթել Կապադովկյան Գամիրքի հետ, որը գտնվում է Անտիտավրոսյան երկրում, իսկ առաջինը, այսինքն՝ «Մատու Գամիր»-ը գտնվում է Ուրարտուի սահմաններում, Ուրմիո լճի մոտերքը։ Ուստի, կիմմերները այդ ժամանակաշրջանում (714—713 թթ. մ.թ.ա.) դեռևս Անտիտավրոսյան երկիրը չէին թափանցել։ Այդ մասին է խոսում նաև այն, որ Սարգոն II-ը Անտիտավրոսյան երկրում Ուրարտուի քաղաքական ազդեցությունը խախտելու նպատակով, օգտվելով Ռուսայի պարտությունից, 712—705 թթ. հարձակում է գործում Անտիտավրոսյան փոքր թագավորությունների[10] Տարալի, Մելիգիու (Մալաթիա), Գուրգամի (Մարաշ), Կումմուխի (Կոմմագենե), Թիլգարիմուի (Թոդ-արմա) վրա։ Այսպիսով, նա ասպատակում է Անտիտավրոսյան երկրի մեկ ծայրից մյուսը, սակայն կիմմերների մասին դեռևս հիշատակություն չկա։ Կասկածից դուրս է, որ 8-րդ դարի վերջին քառորդում (մ. թ. ա.) կիմմերները Անտիտավրոսյան երկիր չէին ներխուժել, այլ, Ուրարտուի պարտությունից հետո, դեպի Արևմուտք ուղղվելով ժամանակավոր բնակություն են հաստատել Արաքսի, Եփրատի, Հալիսի և Թերմոդոնի վերին հոսանքի ավազաններում[11], այսինքն՝ դեպի Սև ծովի առափնյա լեռնային շրջանները, ինչպես և մինչև Սինոպի թերակղզու շրջակայքը։

Կիմմերները Սինոպի թերակղզուց ասպատակություն գործել հարևան երկրները։ Իսկ ութերորդ դարի վերջին տասնամյակին (708—705 թթ.). երբ տրերները (ըստ Ստրաբոնի՝ կիմմերների ցեղերից մեկը) Թրակյան Բոսփորից Բուրանիա են անցնում, կիմմերները իրենց հերթին Տեուշբայի առաջնորդությամբ 695—690 թթ. (մ. թ. ա.) ներխուժում են դեպի Խիլակիու (Կիլիկիա), Կեսարիայի արևմտյան կողմը, մինչև Փռուգիա[12]։ Մինչդեռ պրոֆ. Ստ. Լիսիցյանն իր «Կիմմերական ներարշավի ուղին Անդրկովկաս» հոդվածում հայտնում է այն կարծիքը, որ կիմմերները մինչև 7-րդ դարի առաջին քառորդը (677 թ. մ. թ. ա.) դեռևս Կապադովկիա չէին թափանցել։ «Այս տեղափոխությունը,— գրում է նա,— պիտի կատարված լինի 673 թ. մ. թ. առաջ, հավանական է 677 թ. մ. թ. ա.։ Hubuskia-ի մոտ (Զտվի և Վերին Տիգրիսի միջև) տեղի ունեցած ճակատամարտից հետո ջարդված կիմմերները չեն կարողացել նահանջել Մտնա, գուցե, մասամբ սկյութների, մասամբ էլ ասորեստանցոց ճնշման տակ և դիմել են Կապադովկիա, մասամբ էլ ուրարտացոց Ռուսա II-ի աջակցությամբ, որի հետ, որպես օժանդակ ուժեր, մասնակցել են հետո Շուպրիայի ճակատամարտին»[13]։

Պատմական տվյալների բազմակողմանի ուսումնասիրությունը հակառակ եզրակացության է բերում։ Առաջին՝ Ասորեստանի ճակատամարտը կիմմերների դեմ տեղի է ունեցել ոչ թե 677 թ. մ. թ. տ., այլ դրանից մոտ երկու տարի առաջ, այսինքն՝ 679—678 թթ. (մ. թ. տ.), երկրորդ՝ ոչ թե Հուրուշկիայում, այլ Հուրուշնայում (Սարոսի հովիտ, Կապադովկիա), ուր Ասորեստանյան թագավոր Աշարհադդոնը կիմմերներին պարտու-

---

[9] Idem, Part I. էջ 133։

[10] N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946. էջ 118։

[11] G. Maspéro, Histoire ancienne des peuples de l'Orient classique, T. III, Paris, 1899, էջ 350։

[12] Տ. Վ. Սանդալչյան, Սկպադիր արձանագրություն, Վիեննա, 1901, էջ 60։ Հմմտ. նաև Մասպերո, 3-րդ հատոր, էջ 342—353։ Հեղինակի ծանոթ. այդ ժամանակաշրջանում Կեսարիան Կիլիկիայի Խիլակուի մաս էր կազմում։

[13] Պրոֆ. Ստ. Լիսիցյան, Կիմմերական ներարշավի ուղին Անդրկովկաս, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1947, № 1, էջ 9—10։

# ՓՈՔՐ ՀԱՅՔ
## ԿԱՄ ԳԱՄԻՐՔ ԲՆԱՇԽԱՐՀԸ




Քարտեզի հեղինակ՝ Վ. ԹԵՄՈՒՐՃՅԱՆ

Մասշտաբ 1:2000000

կմ 20 0 20 40 60 կմ

—·—·—Վասպուրականիկ, Անիիկ և կարսիկ XI-դ. գաղթակ Արծրունիների, Բագրատունիների հաստատված երկրամասի սահմանները

⊙ Քաղաք ○ Գյուղաքաղաք • Գյուղ և ավան

թյան մտանելով, նրանց ետ է մղում Հալիս գետի մյուս կողմը[14]։

Պրոֆ. Լիսիցյանը, հետևելով Հոմմելին, Հուրուշնան շփոթել է Հուրուշկիայի հետ։ Հոմմելը, դեռևս պատմական փաստերի բացակայության պատճառով Հուրուշնայի ճիշտ վայրը չկարողանալով որոշել, հանգել է հետևյալ կամայական ենթադրությանը. «Թերևս Հուրուշկիայի հետ նույնը համարելու ենք Հուրուշնա երկիրը, որտեղ Աշարհադդոնը Տեյուշպա կիմերացուն և Մանդյան ռազմիկը նվաճեց։ Որով կամ դրչության իրական մի սխալ կա (կի կամ կա դրելու տեղ նա է դրված) և կամ Ասորեստանցի դպիրն առջևն արքունական տառերով գրված մի օրինակ է ունեցել և այդ օրինակում. իրար շատ նմանող նա և կի սեպագիր նշանները շփոթել է»[15]։

Այժմ պատմական տվյալների հիման վրա ապացուցված է, որ Հուրուշնան իսկապես գոյություն է ունեցել և որի հիշատակումը գտնում ենք խեթերի թագավոր Տութհալիա առաջինի թոռան՝ Լարարնայի (Թարոնու) նվաճած քաղաքների ցուցակում. Ուիլլուսա, Հուրուշնա, Տուվանուվա, Նենասսա, Լանդա, Ղալարա, Պուրուշհանտա, Լուսնա[16]։ Համաձայն Օլմստեդի, Հուրուշնան գտնվում է հին Կոմանայի մոտերքը՝ Սարոսի հովտում, Կապիսոսի վայրում[17], իսկ ըստ Ֆորերի՝ Սարոսի վարի հովտում։ Երկու դեպքում էլ նա գտնվում է Անտիտավրոսյան երկրում։

Վերջապես, պրոֆ. Լիսիցյանի ենթադրությունը ինքնըստինքյան հերքվում է նրանով, որ Հուրուշկիայում ճակատամարտը տեղի է ունեցել Իշպակեի գլխավորությամբ մանացիների հետ դինակցած սկյութների և ասորեստանցիների միջև։ Այս վերջինների կողմից սկյութները ետ են մղվում դեպի Ուրմիո լճի հյուսիսային կողմը[18]։ Ինչ վերաբերում է կիմմերներին, մինչև Անտիտավրոսյան երկիր թափանցելը նրանք ասորեստանցիների հետ լուրջ ընդհարում չեն ունեցել։ Իսկ Շուպրիայի ճակատամարտում, որը տեղի է ունեցել 676—675 թթ., պարտվողները կիմմերները չեն եղել։ Այդ ժամանակ կիմմերները պատերազմում էին փռյուգացիների դեմ։ Այդ բանը հաստատվում է նաև նրանով, որ Աշարհադդոնը գերեվարված Շուպրիայի բնակիչների մեջ գտնված ուրարտացիներին վերադարձնում է Ռուսային, որպես վարձատրություն նրա չեզոքության համար[19]։

Հարկ կա նշել, որ կիմմերները թեև 679—678 թթ. Հուրուշնայի (Գամիրը) ճակատամարտում կորցրին իրենց առաջնորդին՝ Տեուշրային և ունեցան ծանր կորուստներ, դեռևս չի նշանակում, թե նրանք լիովին պարտություն են կրել, ինչպես հենթադրում է Ստ. Լիսիցյանը։ Ընդհակառակը, նրանց հարձակումները հետագա տարիներում ավելի մեծ թափ են ստանում։ 675 թ. կիմմերները Տեուշրայի որդի Դուդդամիի (Հերոդոտի մոտ՝ Լուգդամի) առաջնորդությամբ հարձակվում են Փռյուգիայի վրա և պարտված փռյուգացիների թագավոր Միտասը[20] ինքնասպանություն է գործում՝ ցուլի արյուն խմելով։ Տրերներին և Փոքր Ասիայի դժգոհներին իր դրոշի տակ հավաքած Դուդդամին, Լյուդիայի վրա բազմաթիվ հարձակումներից հետո 652 թ. գրավում է նրա մայրաքաղաքը՝ Սարդիկեն[21], բայց Լյուդիայի թագավոր Գյուղեսի որդի Ալյատի օրով կիմմերները ստիպված թողնում են Լյուդիան և վերադառնում են Կիլիկիայի հյուսիսային կողմերը[22], հաստատվելով Կապադովկիայում։ Այդ մասին Մասպերոն գրում է. «Կիմմերները Լյուդիայում և Տավրոսի վրա ունեցած պարտությունից հետո դրեթե կենտրոնացրին իրենց ցեղերի մեծ

[14] G. Maspéro, Histoire ancienne des peuples de l'orient classique, III, Paris, 1899, էջ 350։

[15] Հմմտ. Հոմել, «Gesschichte Babyloniens und Assyriens», էջ 721։ Թարգմանությունը «Հանդես Ամսօրեայ»-ում, 1900, էջ 1951։

[16] N. Adontz, Histoire d'Armenie, Paris 1946, էջ 22—23։

[17] A. T. Olmsted, History of Assyria, New York, London, 1923, էջ 363։

[18] G. Maspero, Histoire ancienne des peuples de l'orient classique, Paris, 1899, էջ 353։

[19] Անդ. էջ 370։

[20] Սույն Միտասը Աշարհադդոնի ժամանակակից է։ Աշարհադդոնը նրան հիշատակում է Շամաշ աստծուն ուղղված ուղերձում՝ Միտա անունով, որը հավանաբար Միտաս առաջինի թոռն է։

[21] Cylindre A du British Museum, Col. III, l. 32—36, dans G. Smith, History of Assurbanipal.

[22] Անցյալում մինչև Հալիս գետն ընկած տերիտորիան Կիլիկիայի մասն էր կազմում՝ իր մեջ պարփակելով այժմյան Կեսարիայի շրջանը։



2—696

մասը Կապադովկիայում, ինչպես նաև Հալիսը և Թերմոդոնի գավառներում»[23]։

Կապադովկիայում, ռազմական առաջնորդ Դուգդամին ներցեղային մի կռվի ընթացքում սպանվում է և նրան հաջորդում է իր որդին՝ Շանտակշեգրուն։ Սակայն կիմմերական քայքայված ռազմացեղախմբերը, այլևս իրենց մեջ Ասորեստանի կայսրությանը դիմադրելու ուժ չունենալով, հաշտություն են կնքում նրա հետ[24], այսինքն՝ ժամանակավորապես ընդունում են Ասորեստանի լուծը, որից հետո նրանց մեծ մասը հաստատվում է Անտիտավրոսյան երկրում։ Հետաքրքրական է այն, որ Անտիտավրոսյան երկրի այն մասում, որտեղ նրանք հաստատվում են, մինչև այժմ էլ պահպանված են բազմաթիվ տեղանուններ, որոնց ստուգաբանությունը մեծապես կընպաստի կիմմերների բնակած երկրամասի, ուստի և Գամիրքի սահմանների ճշտմանը։

* * *

Գամիրք անվան տակ, ինչպես ասվեց, հասկացվել է պատմական Կապադովկիայի ամբողջ երկրամասը, իսկ Կապադովկիայի այն մասը, որտեղ կիմմերները բնակություն են հաստատել և որը նրանց անունով կոչվում էր Գամիրք, դեռևս մնում էր չճշտված։

Գամիրքը Անտիտավրոսյան երկրի այն մասն է, որը հետագայում համարյա համապատասխանում էր հռոմեական շրջանի Կապադովկիայի տասը կուսակալություններից Կիլիկյան կուսակալությանը, որն ընդգրկում էր իր մեջ այժմյան Սեբաստիայից մինչև Կեսարիա, Հալիս գետից մինչև Մելաս գետի (Թոհմա-սու) միջև ընկած գրեթե ամբողջ երկրամասը։

Միջնադարյան հայ պատմագրության մեջ Կապադովկիայի ամբողջ երկրամասի համար Գամիրք էպոնիմի գործածության այդ սխալը, կարծում ենք, առաջ է եկել այն հանգամանքից, որ Փոքր Ասիայում, զանազան տիրապետությունների ընթացքում, առանց նկատի ունենալու Կապադովկիայի սահմաններում տեղի ունեցած վարչական փոփոխությունները, միշտ գործ է ածվել նույն էպոնիմը[25], սակայն Գամիրքը հետագայում նկատվում է որպես Կապադովկիայի մի գավառ։

Գամիրքի բուն վայրը ճշտելու համար, նախքան Անտիտավրոսյան երկրում հնուց մնացած տեղանունների ստուգաբանությունը, անհրաժեշտ է քննության առարկա դարձնել Սեբաստիայի և Կեսարիայի միջև ընկած երկրամասը, որ պարսիկների կողմից կոչվել է Կատպատյուկա, այսինքն՝ Կապադովկիա։ Դա մեծապես կօգնի Գամիրքի սահմանները ճշտելու հարցին։ Կատպատյուկան կարելի է ենթադրել, որ Գամիրքի հայերի բարբառում որոշ հապավումներով դարձել է նախ՝ Կատուկ և ապա՝ աղավաղվելով՝ Կետյուկ, հետագայում՝ Կետիկ[26]։

Կատյուկ-ի կամ Կետիկ-ի մասին հիշատակություն կա միջնադարյան հայ գրականության մեջ։ Կիրակոս Գանձակեցին Ղիդեդտին Սուլթանի և Բաչու Նուինի կռիվների մասին խոսելով, հիշատակում է «Կատուկ» անունը, որտեղ Ղիդեդտինը վրան է խփել նախքան Կապադովկիայի Կեսարիա քաղաքը պաշարելը։ «Քանզի և նա ի վեր էր եկեալ ի տեղւոջէ իւրմէ յաշխարհն հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբ, հուզ ի քաղաքաղեղ մի՝ զոր, ասի, Զմանն կատուկ անուանեն»[27]։

Կատուկի կամ Կետիկի մասին հիշատակություն կա նաև Սուլթան Սուլեյմանի պատերազմական ուղեգրության մեջ։ Այսպես, Օսմանյան կայսրության թաղավորը Պարսկաստանի դեմ 1534 և 1547 թթ. պատերազմների իր ուղեգրության մեջ երկու անգամ նշում է Կեսարիայի և Սեբաստիայի միջև գտնվող Կատյուկ-ի կամ Կետիկ-ի

---

23 G. Maspero, Histoire ancienne des peuples de l'orient classique, Paris, 1899, Vol. III. էջ 474,

24 Seeck, Inscription votive d'Assurbanipal, London, էջ 281,

25։ Կապադովկիան Գամիրը անվան տակ ներկայացնելու այդ սխալը դեռևս մինչև մեր օրերի շարունակվում է. այդ մասին առ՝ Ցիմմերների «Կապադովկիա» աշխատությունը («Գամիրք», թարգմ. Հ. Տաշյանի)։

26 Ըստ լեզվաբանական օրինաչափության, Կատպատյուկա անունը բառավերջի «ա»-ի անկումով դարձել է «Կատպատյուկ». այնուհետև միջանկյալ «պա»-ն սղվելով դարձել է «Կատյուկ». երկու «ա»-երից մեկի անկումով ստացվել է «Կատյուկ» ձևը։ Ա-ի հնչյունափոխությամբ «Կատյուկ»-ը վերածվել է «Կետուկ» կամ «Կետիկ» ձևերի։

27 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 266։

մասին։ «Կետյուկ օվա (Կետուկի դաշտ), Կետիկ խան»[28]։

«Բյուրակն» հանդեսի մեջ Կետիկի մասին նույնպես կարդում ենք հետևյալը. «Կետիկ կանվանվին Կեսարիո և Սեբաստիո միջև Շարգշլայի գայմագամության՝ գրզրլ-բրմագի (Հալիս գետի) հարավը ընկնող գյուղերը, ուր կը գտնվին հայ գյուղերը՝ Կեմերեկ, Գարադյոլ, Լիսանլը, Թոփաճ, Գայաբունար, Յափալթին, Գրզրլ-Բրմագի հյուսիսը ընկնող և նույն գայմագամության վերաբերյալ քանի մը հայ գյուղեր ալ Զեպնի, Պուրհան, Տենաել, Ալաքիլիսե»[29]։

Թորգոմ Գուշակյանն իր «Ճամբու վերհիշումներ» հոդվածի մեջ Գամիրք անվան տակ մատնանշում է այն վայրը, որին տեղական ժողովուրդը անվանում է Կետիկ։ «Սեբասաիայեն մեկնումիս հաջորդ կեսօրին իսկ (7 նոյեմբեր), կը հասնիմ Շեհեր ղշլա (Շար-ղշլա), կենտրոնական ավանը Սվտղի կենտրոնական սանճագին պատկանող Թոնուս գավառին։ Այս գավառակը, որ կը համապատասխանե հին Կապադովկիոյ Գամիրքի սահմաններուն, կը պարունակե իբր 20,000 (քսան հազար) հաշվող հոծ հայություն մը, ցրված 19 գյուղերու մեջ, որոնք են՝ Շեհեր-ղշլա (Շար-ղշլա), Թոփաճ, Գայաբունար, Յափալթուն, Կեմերեկ, Գարակյոլ, Լիսանլը, Թեքմեն, Տենտիլ, Պուրհան, Զեփնի, Փաշագյուղ, Ղաղիմաղարա, Գանթարող, Գուրտլու-Գայա, Փաթը, Պահար-էոզու, Թեմեճիկ, Ալաքիլիսե»[30]։

Գամիրքը, որպես Կապադովկիայի գավառներից մեկը, հիշատակված է նաև Հայսմավուրքի մեջ. «Ս. Սարգիս Կապադովկիան Կեսարիո Գամիրք գավառից էր»։

Յ. Վ. Հակոբյանը Գամիրքի մասին անում է հետևյալ խորհրդածությունը. «Կապադովկիա կը կոչվեր ի հնումն առ հայս Գամիրք, ուստի է այս անունն.—ենթադրություն մը.—Կեսարիո հյուսիս արևելյան կողմը կա գյուղ մը Կարմիր, Կարմրակ՝ Թրքերեն՝ Կերմիր անուն. դեպի հյուսիս արևելք 9 ժամ անդին Գամրակ, Թրքերեն Կեմերեկ գյուղ մը, մեծամասնությամբ հայաբնակ, իսկ Կեմերեկից ոչ սակավ հեռի կա հուն գյուղ մը՝ Գամիրքան, Թրք. Կոմյուրկեն անվանյալ, Կարմիր, Կարմրուկ, Գամիրքան երեքն ի միասին չեն շիներ Կամիրք կամ Գամիրք»[31]։ Անշուշտ, Հակոբյանի ուշադրությունից վրիպել է Կոմյուրկենից ոչ շատ հեռու Գոմերան, Թրք. Կյոմյուրեն թուրքմենաբնակ գյուղը։

Վերոհիշյալ անունները ենթադրում ենք. որ Գամիրքի և Գոմերի ածանցված և հետագայում Թրքերենում աղավաղված ձևերը լինեն. օրինակ, «Գամիրք» տերմինը պարսկերեն հոդնակի «ան» ածանցով դարձել է «Գամիրքան», ինչպես շահ՝ թագավոր, շահան՝ թագավորներ, իսկ հետագայում սելջուկ Թրքերի, թուրքմենների տիրապետության ժամանակ՝ Գամիրքանը դարձել է Կյոմյուրեն։ Բիբլիայի «Գոմեր» բառը հավանաբար նույնպես «ան» ածանցով դարձել է Գոմերան, հետագայում թուրքերենում՝ Կյոմերեն։

Ինչ վերաբերում է Կէմէրէկ գյուղաքաղաքի անվան, ենթադրում ենք, որ դա ուղղակի հնչյունափոխության միջոցով Գամիրք տերմինի տառադարձյալ մի ձևն է։ Կէմէրէկ անունը, սովորաբար, գրվում է երեք «է»-ով, մինչդեռ, համաձայն հայ լեզվի քերականական կանոններին, անսովոր բան է մեկ բառի մեջ երեք «է»-ի ներկայությունը։ Ոմանք ենթադրում են, թե Կէմէրէկը՝ Կամարակ[32] անվան հնչյունական աղավաղված ձևն է։ Կամարակը, իբր թե, իր անունը ստացել է այդ վայրում գտնվող կամարակերտ մի հուշարձանից, որի տակից ջուր է բխում։ Սակայն Թորգոմ Գուշակյանը ենթադրում է, որ Կամարակը Կեմերեկի հայաշրջման մի ձախող փորձ է։ «Կամարակ անունը,—գրում է նա,—զոր երբեմն գործածած են հայերենի ուսուցիչներ, ընդունելությունն ալ չէ զտած արդեն»[33]։

Ուշադրության արժանի է մի պարագա ևս, որ Կեմերեկի շրջակա գյուղացիներից՝ պուրհանցիները և տենդիլցիները կեմերեկցիներին կոչում էին Գամրիկցի, որը Գամիրք բառին հնչյունական մոտիկություն

---

[28] Hammer, Histoire de l'Empire Ottoman, Paris, Vol. V, էջ 94, Vol. VI, էջ 451.

[29] «Բիւրակն», Կ. Պոլիս, 14 հատ., 1900, էջ 660։

[30] Թ. Գուշակյան. Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետր. 10/23, № 5272։

[31] «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, սեպտ. 29, Զ. 38—39։

[32] «Բնաշխարհիկ բառարան», 2-րդ հատ., էջ 387։

[33] «Բիւզանդիոն», թերթ, Կ. Պոլիս, 1914, փետր. 10/23։

ունի։ Պետք է նշել, որ հայ գրականության մեջ Կեմերեկ տերմինին, որպես համազոր գործ է ածվել Գամիրք և Գամրակ երկու ձևերը։ Օրինակ, Կ. Գարիկյանը «Եղեռնապատում»-ի մեջ գրում է. «Կորյանց դայեկն Գամիրք-Կեմերիկ[34]։ Ճիվան Աշըգյան Սենեքերիմ Արծրունու կրտսեր եղբորը՝ Դանիել իշխանի Կեսարիա ուխտագնացության մասին նկարագրության մեջ օգտագործում է «Գամրակ»[35] տերմինը։ Այս վերջին ձևը գտնում ենք նաև Կեմերեկի դպրոցի ճակատի վեց տող ոտանավորի մեջ։

Հարկս է այս սրբազան
Արամյան վարժարան,
Կառուցան ի վաստակ
Որոց է ի Գամրակ
Վեհ նվեր հայրենի
Բոյն մանկտվոյն Արմենի[36]։

Երեմյա դպիր Օշականցին 1765 թ. հունիսի 8 թվակիր նվիրակությունների ցուցակում Կեմերեկը հիշատակում է Գեամրակ ուղղությամբ[37]։ Չնայած որ վերոհիշյալ Գամրակ և Գեամրակ ձևերը նոր վկայություններ են, սակայն կարող են նպաստել Գամիրք անվան մեկնությանը։

Այսպիսով, պարզվում է, որ կիմմերների մեծ մասը բնակություն է հաստատել Հալիս գետի ծունկից մինչև Մելաս գետը (Բոհմասու), իսկ որոշ մասը տարածվել է նաև մինչև վերին Եփրատի միջև ընկած երկրամասում։ Այդ երկրամասը Աստվածաշնչում տեղ է գտել «Գամեր» կամ «Գոմեր» Լյոնիմի տակ, որը հայ վաղ միջնադարյան դրականության մեջ ծանոթ է Գամիրք կամ Գամրաց աշխարհ անունով։ Մյուս կողմից, պետք է նշել, որ այդ երկրամասը յոթերորդ դարի կեսերին (մ. թ. ա.) իր աշխարհագրական դիրքով երեք պետությունների՝ Ասորեստանի, Ուրարտուի և Լյուդիայի միջև կազմում էր, այսպես ասած, մի ազատ գոտի, որտեղ միայն կարող էին պարտված կիմմերները հաստատվել և որը կիմմերների գլխավոր զբաղմունքի՝ անասնապահության և հատկապես ձիաբուծության համար հանդիսանում էր նաև ամենահարմար վայրը։ Հատկանշական է նաև այն, որ կիմմերների ցեղապետի Շանտակշեգրու անունը նշանակում է պարզապես ձիերով հարուստ։

Կապադովկիան ինչպես այժմ, նույնպես և անցյալում, մասնավորապես նախնագույն Կիլիկյան լեռնագավառը, այսինքն՝ Գամիրքը, ծանոթ էր իր անասնաբուծությամբ, հատկապես իր ձիաբուծությամբ։ «Կապադովկիայի իշխանները,—գրում է Ստրաբոնը,—բացի դրամական մի փոքրիկ տուրքից, յուրաքանչյուր տարի Դարեհին հայթայթում էին 1500 ձի, 2000 ջորի և 50 հազար ոչխար»[38]։ Մեր կարծիքով այդ բնատուրքի մեծագույն մասը հայթայթում էր հենց Կապադովկիայի Գամիրք գավառը։ Այդ հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք Եսեկիել մարգարեի՝ Թորգոմի տան (խոսքը հայերի մասին է—Վ. Թ.) հասցեին ուղղված խոսքերը։ Մարգարեն իր խոսքը Տյուրոս քաղաքին ուղղելով, ասում է. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորովք լցին զվաճառս քո»[39]։

Մինչև մեր օրերը Սվազի (Սեբաստիա) կուսակալության չորս գավառներից (սանճաղ), հատկապես Սվազի գավառը հարուստ է անասուններով։ Ըստ Սալնամեի, 1890 թ. Սվազի գավառում կար 20214 խոշոր եղջերավոր անասուն, որից 10036 կով, 15240 ձի, 7620 էշ, 66252 ոչխար, 81260 այծ[40]։

Վերջապես, այն երկրամասում, ուր կիմմերների մեծ զարմն է հաստատվել, կան նաև նյութական կուլտուրայի որոշ մնացորդներ։ Այդ տեսակետից հնաբրբրական են Կեմերեկից 8 կիլոմետր հեռու, Կեսարիայի խճուղու մոտ, հենց Կյոմեբենի (Գոմերան) և Կյոմյուրբենի (Գամիրբան) հյուսիս արևմտյան կողմը, մի բարձրության վրա կողք-կողքի գտնվող հինգ հողաբլուրները։

---

[34] Կ. Գարիկյան, Եղեռնապատում, Պոստոն, 1923, էջ 19։

[35] Սիմոն Գարամանյանի տարեցույցը, Բարիզ, 1932, էջ 187։

[36] Սույն վեց տողանի ոտանավորը գրել է Կեմերեկցի հայերենի ուսուցիչ և հասարակական գործիչ Հակոբ Պահլավունին, «Արամյան» դպրոցի հիմնադրության առիթով։

[37] Դիվան Հայոց պատմության, Գ., Թիֆլիս, 1894, էջ 799—800։

[38] Strabon, XI. 525.

[39] Աստվածաշունչ, Եզեկիել, Գլ. ԻԷ, 14։

[40] Vital Guinet, La Turquie d'Asie, Vol. I. 626—640.

Նույնանման 30 հողաբլուրներ («հյուլուկներ») կան Կեսարիայի և Սեբաստիայի միջև, որոնցից մասը գտնվում են Կեմերեկի շրջակայքում։ Դրանցից մեկը գտնվում է Կեմերեկից Շարգշլայի ճանապարհի վրա, հենց գյուղաքաղաքի առաջ՝ Հյուլուկի դաշտում և որն ունի 15—20 մետր բարձրություն, մյուսը՝ Լիսանլու գյուղի մոտ, երկու հաա Էլ Ղըզըլճա-ղշլայի Ղարաբունար կոչված վայրում[41]։ Սթե ճանապարհների եզրերին առանձին հողաբլուրները կարելի է ընդունել որպես դիտարան, ինչպես Կ. Գարիկյանն է ենթադրում[42], ապա հինգ հողաբլուրների կոդք-կողքի առկայությունը (Կեսարիայի ճանապարհին) չի արդարացնում դրանց որպես դիտարան ծառայելու հանդամանքը։ Բնաշխարհիկ բառարանում այդ հինգ բլուրների մասին ասված է հետևյալը. «Կր կարծվին բլլալ հնադարյան իշխանաց դերեզմաններ»[43]։

Լման Հաուդար այդ հողաբլուրները նրմանեցնում է ընդհանրապես թրակիական կուրգաններին[44], անշուշտ, արմենների արևմուտքից եկվոր լինելու իր թեզը հիմնավորելու համար։ Սակայն չի՞ կարելի ենթադրել արդյոք, որ դրանք կիմմերյան գերեզմաններ լինեն, քանի որ իրենց ձևերով ավելի նմանվում են կիմմերյան Բոսփորի մեծ կուրգաններին։

Պատմական տվյալների և հատկապես Անթիոավրոսյան երկրում պահպանված տեղանունների բննությունը ցույց է տալիս, որ կիմմերների մեծագույն մասը, ամբողջ Փոքր Ասիան 8-րդ դարի վերջերից մինչև 7-րդ դարի կեսերը ասպատակելուց հետո, բնակվել է Կապադովկիայի, հետագայում «նախնադույն Կիլիկիա» կոչված գավառում։ Ժամանակի ընթացքում, թեև կիմմերները ձուլվում են կապադովկյան ղանաղան ցեղերի հետ, այնուամենայնիվ, մինչև վաղ միջնադարը հայերի կողմից այդ երկրամասը նրանց անունով կոչվել է Գամիրք։

[41] Կեմերեկի մոտ Ղարաբունարի Ղըզըլճա-ղշլա կոչված վայրի հողաբլուրների արտից հայտնաբերվեցին բնական մեծությամբ թրծված կարմիր կավե ցուլի, երինջի երկու արձան։

[42] Կ. Գարիկյան, Եղեռնապատում, Պոստոն, 1934, էջ 126։

[43] Տե՛ս «Բնաշխարհիկ բառարան», էջ 387։

[44] C. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, I. Berlin, 1910, S. 382.

## Բ. ԳԱՄԻՐՔԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջավոր Ասիայում, նախքան մեր թվականության 7-րդ դարի վերջերը, արտադրողական ուժերի զարգացման հետևանքով, տոհմացեղերի ներքին խիստ շերտավորումը մեկ կողմից, սկյութական, կիմմերական արշավանքների հետևանքով Ասորեստանի և Ուրարտուի թուլացումն ու վերջնական կործանումը (612—585 թթ. մ. թ. ա.) մյուս կողմից, հնարավորություն են ստեղծում ռազմա-ցեղային մի նոր միության՝ Արմենիայի կազմավորմանը, որը սակայն 580-ական թթ. ընկնում է Մարաստանի ազդեցության սֆերայի մեջ, իսկ 521 թ. (մ. թ. ա.) նվաճվում է աքեմենյանների կողմից։ Հետագայում Մագնեզիայի ճակատամարտում (190 թ. հունվ. 5-ին մ. թ. ա.), երբ Սելևկյանները հռոմայեցիներից պարտություն են կրում, Առաջավոր Ասիայի երկրները, այդ թվում նաև Արմենիան, գլուխ են բարձրացնում։ Հայաստանի տերիտորիայում Սելևկյան երկու տեղական ներկայացուցիչները՝ Արտաքսիասը (Արտաշես) և Զարիադրիսը (Զարեհ), իրենց անկախ են հռչակում։ Այսպիսով, վերականգնվում է Արմենիան, որն սկզբում փոքր և թույլ էր, բայց հետագայում, Արտաշեսի և Զարեհի ժամանակ ձեռք է բերում ինչպես քաղաքական և տնտեսական հզորություն, այնպես էլ տերիտորիալ մեծություն։ Ըստ Սուրաբ«ունի, Զարեհի թագավորությանը, այսինքն՝ Ծոփքին է կցվում նաև «Անտիտավրոսի կողմերում գտնվող երկիրը»[3], որը հետագայում մասն է կազմում Փոքր Հայքի։ Ուստի, Կուր գետից մինչև Անտիտավրոսյան երկիրը, պատմական Հայաստանի տերիտորիայում, կազմվում են երեք հայ-արմենական թագավորություններ՝ ա) Արտաշիսյան թագավորությունը՝ Երասխի հովտում, Մեծ Հայքը՝ Արտաշատ մայրաքաղաքով, բ) Զարեհյան թագավորությունը կամ Ծոփքը, Հայաստանի հարավ-արևմտյան կողմերում, Սրշամաշատ քաղաքով և գ) Փոքր Հայք, որն ընդգրկում էր Վերին Եփրատի արևմտյան մարզերը, Սեբաստիայի գավառով, Հնտևաբար և Գամիրքը։

[3] Strabon, XI, 17. 5 (528).

Այսպես ուրեմն, Գամիրքը դեռ հին ժամանակներից եղել է հին հայերի հիմնական և գլխավոր կենտրոններից մեկը։ Այդ վկայում է նաև Հերոդոտը, որ սկզբնական շրջանում Հայաստանը գտնվում էր Վերին Եփրատի ափերին[4]։ Հենց Փոքր-Հայք էպոնիմը ցույց է տալիս, որ Կապադովկիայում հայերը որոշ ուժ էին ներկայացնում։ Օրինակ, Փոքր Հայքը, Նեմանես կամ Նույնամես արմեն զորավարի գլխավորությամբ, որպես օժանդակ ուժ, տասը հազար հեծելազոր է ուղարկում Միհրդատ Եվպատորին[5]։

Մեր ուսումնասիրության ընույթից ելնելով, անհրաժեշտ է ծանոթանալ, թե ընդհանրապես պարսկական և հռոմեական տիրապետության օրոք ինչպիսի սոցիալ-տնտեսական դրության մեջ էր գտնվում Առաջավոր Ասիան, հետևաբար Հայաստանը, Կապադովկիան և այդ թվում Գամիրքը։

Պարսկա-աքեմենյան տիրապետությունից սկսած մինչև հռոմեական տիրապետության շրջանը (546 թ. մ. թ. ա.—17 թ. մեր թվականի) 563 տարիների ընթացքում, թեև Առաջավոր Ասիայում քաղաքական, տնտեսական հարաբերությունները որոշակի փոփոխությունների էին ենթարկվել, սակայն մակեդոնական-սելևկյան, հայկական-պոնտական և հռոմեական հարատև պատերազմների հետևանքով, Կապադովկիայում տեղի ունեցած ավերածությունները, դերեվարությունները, կեղեքումները արգելակում էին քաղաքական կայուն գրություն ստեղծելուն և արտտդրողական ուժերի նորմալ զարդացմանը։ Պարսիկները 546 թվին (մ. թ. ա.), երբ գրավում են Կապադովկիան, այնտեղ արդեն գոյություն ունեին ստրկատիրական հարաբերություններ, որ նվաճողների կողմից հասցվում է իր ավելի բարձր աստիճանին։ Կապադովկիայում գրեթե բոլոր հողային կալվածները գրավելով, բաժանվում են մեծ մասամբ պարսիկ նկվոr ազնվականների և կրոնավորների միջև։ Երկրում ամենուրեք կառուցվում են ղզյակներ, որոնք ազնվականների համար ծառայում են թե որպես միջնարերդ և թե միաժամանակ բնակարան։ Դղյակների կողքին կառուցվում են Որմիզդի պաշտամունքի տաճարներ և, այսպիսով, գրավվում են բոլոր հողերը։

Աքեմենյանների կառավարման մեթոդը նույնքան խիստ է եղել, բայց նվազ կոպիտ, քան իր նախորդներինը։ Աքեմենյանները ժողովուրդներին իրենց տեղերից խմբովին բռնի չէին տեղափոխում և ոչ էլ նրանց ժողովրդյան ավանդությունները արգելում։ Հին դինաստիաները խորտակելուց հետո, նրանք գոհանում են դրամական և նատուրալ հարկահանությամբ և զինվորական ծառայությամբ։ Նվաճված երկրներում նրանք, հենվելով քրմական դասի վրա, պաշտոնապես ճանաչում են տեղական քրմապետների հոգևոր իշխանության ժառանգականությունը, թույլատրում են նրանց պահել իրենց հողերը և ստրուկները։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ մեզ հասել է Դարեհի Փոքր Ասիայի սատրապ Գադարին գրած մի նամակից, որտեղ ասված է. «Արքայից արքա Դարեհը, Վշտասպի որդին, ստրուկ Գադարին ասում է հետևյալը. «Ես տեղեկանում եմ, որ դու ամեն բանում չես լսում իմ հրամաններին, որ դու մշակում ես իմ հողը՝ Եփրատի այն կողմը, ստորին Ասիայի շրջանում գտնված տեղից պտուղներ տնկելով։ Ես զովում եմ քո մտադրությունը և դրա փոխարեն թաղավորի տանը հաշվի կառնվեն մեծ շնորհներ։ Իսկ որ դու աստվածների վերաբերյալ ոչնչացնում ես իմ մտադրությունը, դրա փոխարեն հոգևոր վիրավորանքի ապացույց կտամ ես քեզ, այսինքն՝ Ապոլլոնին նվիրված պյուչացիներից դու մարս ես վերցրել և հրամայել ես նրանց փորել մասնավոր հողը, չես իմացել իմ նախնիների հարաբերությունը այդ աստուծու վերաբերմամբ, որը պարսիկներին ասել է ամբողջ ճշմարտությունը»[8]։

Այստեղ խոսքը թեև հունական քրմության մասին է, բայց նույնը կարելի է ասել նաև մյուս նվաճված երկրների վերա-

---

[4] Геродот, V, 52.

[5] Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, էջ 122։

[6] Th. Reinach, Mithridate Eupator, Paris, 1890, էջ 23։

[7] Meyer, Inscription Ass., Geschichte des Alterthums. I. § 337. Isodore de peluse. Ep. I. 487.

[8] Հին աշխարհի պատմություն, հ. Ա, Հին Արևելք. էջ 562—563։

բերյալ։ Օրինակ՝ Կոմանայի, այժմյան Բունար-Բաշրյի մոտ, Սարոսի հովտում։ Մա աստվածուհու տաճարի հողերի վրա, Ստրաբոնի ժամանակ դեռևս աշխատում էին վեց հազար հիերեդուլներ՝ տաճարում ծառայող սարուկներ՝։

Պարսիկ իշխողը եթե մեկ կողմից Կապադովկիայի ստրկատերերին մասնակից է դարձրել իր շահագործմանը (որովհետև պարսիկների թիվը, ըստ նվաճված երկրների ժողովուրդների թվի, չնչին տոկոսն է կազմել), ապա մյուս կողմից, Կապադովկիան կուլտուրապես նվաճելու համար կանդնեցնում է սրբավայր սրբավայրի դեմ՝ մոդերի դպրատներ, սրբազան կենտրոնավայրեր, Որմիզդի պաշտամունքի տաճարներ, ինչպես նաև գործածության է տրվում մոդերի սրբազան օրացույցը[10]։ Այսպիսով, պարսիկները տեղական ավադանուն տալով որոշ առանձնաշնորհումներ, ձգտում էին նրանց աղդեցությամբ ավելի հաստատ դարձնել իրենց տիրապետությունը։

Պարսիկները հարկերը հավաքում էին կաղալաավության միջոցով, ինչպես հետագայում հռոմեական հասարակապետության ժամանակ, երբ որևէ առևտրական ընկերություն կամ մեծահարուստ վաշխառու պետությունից, բարձր իշխանավորներից կարող էր դնել մի երկրի կամ շրջանի հարկերը հավաքելու իրավունքը, իհարկե, կրկնակին զանձելու նպատակով։ Աշխատավորությանը հարստահարելու այս դաժան սիստեմը կիրառվում էր հին արևելյան երկրներում, հատկապես քաղդեական Բաբելոնում և մինչև անցյալ դարը՝ Թուրքիայում։ Ամեն շրջան ուներ իր կապալառուն, որը հանդիսանում էր մեծ կապալառուի (երկրի, մարզի) զործակալը, որ իր հերթին նշանակված գումարից ավելին էր գանձում։ Հարկահավաքներն ունեին իրենց ծառայողները, ստրուկները, որոնք կատարում էին ամեն տեսակի խժդժություններ։ Գամիրք գավառը, որպես հարուստ երկրամաս, պետք է որ ունենար հարկերի մեծ բաժին, ծանր բեռ։

Առևտուրը, Դարեհից սկսած, նոր թափ էր ստացել, շնորհիվ նրա սկսած մեծ ճանապարհաշինության և ապահովության, ինչպես նաև դրամական նոր սիստեմի ստեղծման։ Համաձայն Հերոդոտի՝ Լյուդիայի գլխավոր քաղաք Սարդիկեից Պարսկաստանի գլխավոր քաղաքներից մեկը՝ Սուզա տանող արքայական ճանապարհը, որի երկարությունն էր 13500 ստադիա (ստադիան 157,5 մետր), անցնում էր Գամիրքից[11] օրական 35 կմ հաշվելով, այդ տարածությունը 60 օրվա ճանապարհ էր։ Աքեմենյանների օրով պարսիկները, տուրքերից և ստրկական բոլոր աշխատանքներից զերծ էին, թեև պարսկական տիրույթներում, ինչպես ամբողջ հին աշխարհում, գոյություն ուներ ստրկություն, բայց նրանք օգտագործվում էին հերկագաշտում և հոտերը պահելու համար և ոչ շինարարական աշխատանքների մեջ։ Պարսիկ ազատները նվաճված բոլոր երկրներում ոստիկանի գեր էին կատարում, որն ապացուցում է նաև 1930 թ. հին պարսկական շահերի մայրաքաղաքներից մեկում՝ Սուզայում գտնված արձանագրությունը[12]։

Ահա այն հասարակական-տնտեսական հարաբերությունները և իրավական գրությունը, իր գլխավոր գծերով, որ գոյություն ուներ վաղ աքեմենյան Պարսկաստանում և նրա հպատակ երկրներում։ Պարզ է, այդ նույն վիճակում պետք է լիներ նաև Գամիրքը։ Սակայն մինչև մեր էրայի 17 թվականը Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների, ապա Հռոմի և Պոնտոսի միջև բորբոքված տևական կռիվների հետևանքով, Կապադովկիայում ստեղծվեց մի անկայուն վիճակ, որն անշուշտ որոշ չափով պետք է կասեցներ երկրի տնտեսական տաքրնթացը։

Մեր դարաշրջանի սկզբներին առաջավոր Ասիայում, որպես հռոմեացիների դեմ պայքարող հզոր ուժ, պարթևներից բացի ոչ մի երկիր չէր մնացել։ Հռոմը արդեն նվաճել էր Հայաստանը, Պոնտոսը, Կիլիկիան, Ասորիքը և սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, որ իր հերթին դարձել էր ասիաբնակ հռոմեացիների միջնաբերդը։

---

[9] Strabon, 8, 4.

[10] Անդ, 8, 4։

[11] Արքունի ճանապարհի մի ճյուղը անցնում էր Կեսարիայից Սեբասիա (Կարիրա), մյուսը Կեսարիայից, Սարոսի հովտով դեպի Մալաթիա։ Այդ հին ճանուղին Թուրքերը կոչում էին «Քյոշ-յոլու» (քոչերի ճանապարհ)։

[12] Հին աշխարհի պատմություն, հ. Ա., Հին Արևելք, էջ 566։

Կապադովկիայում նստում էր հռոմեական կուսակալը, որի ձեռքում էր զինվորական և քաղաքական իշխանությունը, նա իր ամբողջ դաժանությունը ցուցարերում էր հատկապես հարկահանության ընթացքում[13]։

Կապադովկիայում հողային բոլոր կալվածները, նույնիսկ Կոմանայի, Տիանայի քրմական դասի հողերը, որոնք աքեմենյանների օրով որպես տեղական քրմական դասի սեփականություն էին ճանաչվել, այժմ Հռոմի կողմից հռչակվել էին կայսերական կալվածքներ[14]։

Հարկերը նախօրոք, կանխիկ գումարով, վաճառվում էին կապալառուներին, որոնք կուսակալների օգնությամբ անխնա կեղեքելով գյուղի և քաղաքի ժողովրդական մասսաներին, մի քանի անգամ ավելի շատ եկամուտ էին ստանում։ Առաջավոր Ասիայի քաղաքները Հռոմի բանկիրներին պարտական էին (200) երկու հարյուր միլիոն ֆրանկ[15]։

Հռոմեական ադնվականությունը՝ «Հնծյալները», այդ կուտակված կապիտալը արդյունաբերության մեջ չէր օգտագործում, այլ խոլական մսխումներով վատնում էին և կամ ագահորեն դիզում։ Դեռևս դրամատերերը չէին հովանավորում առևտրականներին, բայց բանկիրները, այնուամենայնիվ, հովանավորում էին զորավարներին, որովհետև պատերազմը այդ ժամանակաշրջանում հասույթի գլխավոր աղբյուրներից մեկն էր կազմում։ Կապիտալը օգտագործվում էր նաև վաշխառության մեջ, որտեղ 48 տոկոսը հազվագյուտ դեպքեր չէին։

Ինչ վերաբերում է Կապադովկիային, նա այդ ժամանակաշրջանում ծառայում էր որպես պլացդարմ Հռոմեական և Տիգրան-Միհրդատյան դաշնակցության համար։ Եվ քանի դեռ Կապադովկիան Հռոմեական շահերը չէր պաշտպանում, այնքան նրա «անկախությունը» հարգվում էր Տիգրան-Միհրդատյան դաշնակցության կողմից, և հակառակը, Հռոմեացիները երբ տեսնում էին, որ Կապադովկիան հնազանդվում էր այս վերջիններին, ինքն էր հարձակվում և իր օրիենտացիայի մարգն էր դնում նրա գահին։ Այսպիսով, ստեղծված պայմաններում երկիրը հաճախակի ձեռքից ձեռք էր անցնում։ Ինչպես գրում է Ապպիանոսը, Սուլլայի մահից հետո 78 թ. և Միհրդատյան 2-րդ պատերազմից առաջ (74—71 թթ. մ. թ. ա.) Տիգրանը նորից էր արշավել Կապադովկիա[16], որը փաստորեն շրջապատված էր հայկական (նոր զրավված) երկրներով ոչ միայն Ծոփքի, այլև Կոմմագենի ու դաշտային Կիլիկիայի կողմերից։ Տիգրանին հաջողվում է զրավել տյդ արշավանքի ժամանակ Կապադովկիայի Մաժար մայրաքաղաքը։ Այսպիսով, որոշ ժամանակ Գամիրք զավառը Հայաստանի մասն է կազմում։

Հռոմեացիները, վերջ ի վերջո, դրավում են Կապադովկիան և վերածում մի սովորական նահանգի։ Սակայն, այնուամենայնիվ, դանդաղ առիթներով սահպված են լինում ճանաչել Գամիրքում հայկական թագավորների իրավունքը։ Այսպես, համաձայն Դիոդորոսի, Կարակալլայի հաջորդը՝ Մակրին, երբ պարթևներին մեծ հատուցում վճարելով հաշտություն է կնքում, հայերին ես, որոնք հռոմեացիների դեմ պատերազմի ընթացքում պարթևների հետ էին, սիրաշահում է՝ վաղարշի որդի Տրդատ 2-րդին ճանաչելով հայոց թագավոր։ Կարակալլան նրա պատանդ մորը ուղատ է արձակում։ Ավելին, վերադարձնում

---

[13] Հռոմում ընդամենը 2500 ստրկատեր՝ նորիլներ, որպես տզրուկ աշխարհի մարմնին կպած ծծում էին ոչ միայն ասիական, այլև Եվրոպայում՝ իտալական, գաղիական և սպանական ժողովուրդների արյունը։ Հռոմի ռազմա-ստրկատիրական հասարակապետությունը կազմված էր 200 հազար ստրուկներից, կիսաքաղց և իրավազուրկ պլեբեյներից, պատրիկներից և կախյալ վարձակալ հողագործներից։ Հռոմը զեխության ու թշվառության կենդանի մի օրինակ էր ներկայացնում։

Սարկատիրական կարգերի արտադրողական ուժերը չէին կարող բավարարել Հռոմի նման հարատև պատերազմների մեջ լոկ սպառող մի ռազմական հասարակապետության բազմաթիվ կարիքները և զինվորական ու պետական վերնախավերի անհագ ախորները։

Հռոմը դրսից ոչինչ չէր արտահանում, այլ միջերկրական երկրներից ներմուծում էր ամեն տեսակ մետաղներ և մթերքներ։ Հռոմի եկամտի գլխավոր աղբյուրներն էին կազմում պատերազմական ավարները, կողոպուտները և նվաճված երկրներից վերցրված հարկերը։

[14] Տե՛ս Ch. Texier, Asie-Mineure, Paris, 1852, էջ 514. K. Asian, Etude historique sur le peuple armenien, Paris, 1909, էջ 111։

[15] A. Ribard, La prodigieuse histoire de l'humanité. Paris, 1947, էջ 130։

[16] App., Mith., 67.

Լ նաև այն ճողերը (ոստանները), որ Կապադովկիայում սեփականություն էր Հայաստանի թագավորների. շնորհում է մի պանցիոն և ուղարկում մի ոսկե թագ, որպես նշան ինքնիշխանության։ Վաղ միջնադարյան հեղինակ Սոզոմենը նույնպես, Կապադովկիայում Հայաստանի ունեցած հողերի մասին ակնարկելով գրում է. «Կոստանս, որ Արշակին պաշտպանում էր (350—351 թթ.) ամուսնացնում է նրան հռոմեացի կառավարիչ Ապլանիասի աղջկա՝ Ոլիմպիայի հետ, զեղջում է Փոքր Ասիայում Հայաստանի ունեցած հողերի ճարկը»[17]։

Անկասկած է, որ հայերը Փոքր Հայքում, հետևաբար և Գամիրքում. թվական մեծամասնություն էին ներկայացնում և պահպանում էին հայերեն լեզուն։ Այդ մասին է խոսում այն փաստը, որ կեսարացի Բարսեղ պատրիարքը (379 թ.) Փոքր Հայք իր համփորդության ընթացքում նույն դավառի եպիսկոպոսական աթոռների համար փնտրում էր հայերեն դիտցող մարդիկ[18]։

Այսպես, ուրեմն, մինչև վաղ միջնադարը Գամիրքը հանդիսանում էր հայերի ըստվարաթիվ և կոմպակտ բնակության վայրերից մեկը։

---

[17] Հմմտ. Sozomene (Hermias) Histoire ecclesiatique, Paris, 1676 et Amm. Marc, Մ. Խորենացի և Փ. Բյուզանդ։

[18] J-p. Migne, patrologia cursus completus ser gracca 32—502.